


# «ԱՐԵՎԵԼՔԻ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՈՌԱՑՎԱԾՆԵՐԸ»

Posted on October 25, 2021 by Keghart




Category: [Opinions](#)



**Վևորգ Յագլըճյան**, «Արեւելքի փոքրամասնություններ. պատմության կողմից  
մոռացվածները» հատորի հայերեն թարգմանության խմբագիր և ծանոթագրող ,  
Երևան, 17 Հոկտեմբեր 2021

Այս գիրքը եթե մի կողմից գիտական ԼՈՒՐՁ աշխատություն է, մյուս կողմից՝ բողոքի ձայն  
է Մերձավոր Արևելքի տարածաշրջանի բնիկների՝ քրիստոնյաների ու եզդիների  
հալածանքի նկատմամբ այսպես կոչված քաղաքակիրթ աշխարհի հանցավոր լուռության  
դիմաց:

Գրքի հեղինակը՝ երիտասարդ և կորովի արևելագետ, միջազգային հարցերի լրագրող  
[Տիգրան Եկավյանը](#), լինելով Ֆրանսիայի քաղաքացի եւ ֆրանսաբնակ, խիզախությամբ  
ամբաստանում է նաև Ֆրանսիային ու ֆրանսիացիներին՝ Արևելքի քրիստոնյաների  
նկատմամբ աններելի անտարբերության համար: Ավելին, անհերքելի փաստերով և  
ցույց է տալիս, որ իր պետությունը, ողջ Արևմուտքի հետ, 19-րդ դարու վերջից  
մասնակիցն է մի դավադրության, որը կարելի է կոչել քրիստոնեության օրրան Արևելքի  
ամբողջական ապաքրիստոնեացում: Այդ հրեշային ծրագրի ընդամենը մեկ մասնիկն է  
տարածաշրջանի քրիստոնյաների դեպի արևմտյան  
երկրներ գաղթի քաջալերումը՝ զանազան  
հրապուրանքներով: Ավելին, հաճախ այդ կիսաբռնի  
գաղթը ներկայացվում է իբրև մարդասիրության մեծ քայլ...



Տիգրան Եկավյան թեև չի գրում հենց ի՛ր՝ Արևմուտքի ապաքրիստոնեացման ու դրա  
ծայր աստիճան վտանգավոր հետևանքների մասին, սակայն գրքի բոլոր էջերում այդ  
սպառնալիքի ուրվականը դեմ հանդիման է գալիս ընթերցողին: Այլ խոսքով, Եկավյան  
արևմուտքցիները զգուշացնում է իրենց քաղաքակրթության մոտալուստ վախճանի  
մասին՝ եթե չսթափվեն ու շարունակեն իրենց անտարբեր վերաբերմունքը Արևելքի  
քրիստոնյաների ու սեփական ճակատագրի հանդեպ:

իր այս գրքով հեղինակի հնչեցրած ահազանգը թվում է, թե որոշ ցնցում առաջացրել է դրա վկայությունն են ԵկաՎյանին «Արևելքի առաքելություն» կազմակերպության մրցանակին արժանացնելը, բազմաթիվ գրախոսականները, ԵկաՎյանի հետ բազմաթիվ պարբերականների, հեռուստատեսությունների և էլեկտրոնային կայքերի հարցազրույցները:

Իբրև իր ազգի նվիրյալ զինվոր քաջ, Արցախյան վերջին 44-օրյա գոյամատի օրերին ու դրանցից հետո, ԵկաՎյան նույն այս շրջանակների մեջ մասնակցեց բազմաթիվ հանդիպումների ու հարցազրույցների, ունեցավ բանավոր և գրավոր ելույթներ. իր խոսքում, նա հայոց դեմ ադրբեջանա-թուրքա-պակիստանա-խորայելա-ջիհադական պիղծ դաշինքի հարձակումը ներկայացրեց Մերձավոր Արևելքի ու կից տարածաշրջանը ապաքրիստոնեացնելու և բնիկների բնաջնջելու կամ արտագաղթի մղելու ծիրի մեջ:

Ընդհանուր առմամբ, Տիգրան ԵկաՎյան Մերձավոր Արևելքի բնիկների՝ իրենց բնօրրաններում մնալու և գոյատևելու ելքը տեսնում է քրիստոնյաներ-չափավոր իսլամներ քաղաքավար երկխոսության և քրիստոնեական համաբնագրային աստվածաբանության մեջ: Այդ հարցերի մասին նա իր տեսակետներն է հայտնում գրքի վերջին հատվածում: Ինձ համար հարցական է սակայն, թե այդ երկխոսությունը մի՞թե հնարավոր է հայությունը բնաջնջել կամ, առնվազն, արմատախիլ անել ծրագրած թուրքերի հետ... Պատասխանս միանշանակ բացասական է: Նույնը կարող ենք ասել տարածաշրջանի սուլնի մուսուլմանների մասին, որոնց զգալի տոկոսը այսօր վարակված է անհանդուրժողության, սուլնի իսլամից բացի մյուս կրոններին ու հարանվանություններին հիմնովին մերժելու, նրանց իրենց բնօրրաններում իսկ բնաջնջելու կամ տարածաշրջանից հեռացնելու թույլով: Հետևաբար, հարկավոր և կենսականորեն անհրաժեշտ է անհապաղ որոնել ու գտնել հավասարից հավասար երկխոսության այլընտրանքներ՝ չբացառելով նույնիսկ ուժայինները:

Դա է պարտադրում գոյակռվի տրամաբանությունը:

### **Տիգրան ԵկաՎյանի կենսագրութիւնը**

Տիգրան ԵկաՎյանը ծնվել է Փարիզում 1984-ին: Հասակ է առել Պորտուգալիայում, հաճախել Լիսաբոնի ֆրանսիական լիցեյը, որն ավարտելուց հետո բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում, ապա Արևելյան լեզուների ինստիտուտում (ԻՆԱԼԿՈ): Մասնագիտական դասընթացների



Էհեռուել Դամասկոսի պետական և Կասիկի (Լիբանան) Մեն ժողով  
համալսարաններում: Քաղաքագիտության մագիստրոս է,  
Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական ժամանակակից  
հարցերի մասնագետ:

Տիգրան Եկաձյանը բազմաթիվ հոդվածներով և գրախոսություններով հանդես է եկել  
ֆրանսիական և ֆրանսահայկական պարբերականներում: 2019-ին Փարիզի «Ռոշեր»  
հրատարակչությունը լույս է ընծայել նրա հեղինակած «Արևելքի  
փոքրամասնությունները. պատմության կողմից մոռացվածները» ֆրանսերեն  
մենագրությունը:

Ներկայիս Տ. Եկաձյանը Ֆրանսիայի հետախուզական հետազոտությունների կենտրոնի  
(CF2R) գիտաշխատող է և «Conflicts» («Հակամարտություններ») աշխարհաքաղաքական  
ամսագրի խմբագրական խորհրդի անդամ: Չուգահեռաբար՝ շարունակում է  
հրապարակումներ լույս ընծայել պարբերական մամուլում:

**Keghart.org - [Amazon.com](https://www.amazon.com)-ի միջոցով կարելի է ապահովել Տիգրան Եկաձյանի  
հետեվյալ հատորները՝ Minorités d'Orient: Les oubliés de l'Histoire, Arménie: À l'ombre de la  
montagne sacrée, Mission, Disaporalogue, L'âme des peuples, Géopolitique de l'Arménie, ևն.**

**There are no comments yet.**